<<ԳՈՒԳԱՐՔ>>ԿՊ ՊՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՎԳԿՊ-ԳՀԱՊՁԲ-20/12>>-1

ք. Վանաձոր «04» օգոստոսի 2020թ.

<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Մ. Ա. Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Ալֆա-Ֆարմ>> ՓԲԸ-ն , ի դեմս տնօրեն Մ. Մացակյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1622751,1 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև _____ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում:[19]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված _____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[19] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում

պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ

---

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.	ք. Երևան, Շիրակի 1/68
ՀՎՀՀ 07300626	ԷՎՈԿԱԲԱՆԿ
Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ Վանաձորի մ/ճ	հ/հ 16600-05218060100
հ/հ 247170009424	ՀՎՀՀ 05507136
Տնօրեն՝ _____ Մ. Ա. Սիմոնյան	Հեռ. 060 700-500
/ստորագրություն/	էլ. հասցեն՝ tender@alfapharm.am
Կ.Տ.	_____
	/ստորագրություն/
	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 04 » 08 2020 թ. կնքված
<<ԿԳԿՊ ԳՀԱՊՁԲ-20/12>> -1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հերթեր	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը՝	ժամկետը***
1	33651112	Ամոքսիցիլին + քլավուլանաթթու դ/կ ախտ 125մգ/5մլ +31,25մգ/5մլ շշիկում	Ամոկսիկլավ 156.25մգ/5մլ ներքին ընդունման դեղակախույթի դեղափոշի Լեկդդ	Դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 125մգ/5մլ +31,25մգ/5մլ, <<կոտրվող է>>	հատ	918	55080	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորությամբ դեղատուն	60	2020թ. երկրորդ կիսամյակ
2	33651112	Ամոքսիցիլին+քլավուլանաթթու 250մգ/5մլ + 62,5մգ/5մլ մգ շշիկում	Ամոկսիկլավ 312.5մգ/5մլ ֆորտե Լեկդդ	Դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 250մգ/5մլ + 62,5մգ/5մլ <<կոտրվող է>>		2853	171180	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորությամբ դեղատուն	60	2020 թ. երկրորդ կիսամյակ
3	33651125	Ազիթրոմիցին 250մգ դեղապատիճ	Ազիթրոմիցին	Ազիթրոմիցին դեղապատիճ 250մգ		186	18600	100	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով	100	2020 թ. երկրորդ կիսամյակ

			“Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան” ԲԲԸ						հեռավորության վրա դեղատուն		
4	33651112	Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ) դեղահատեր թաղանթապատ 875մգ+125մգ	Աուգմենտին Սմիթկլայն Բիչեմ Լիմիտեդ,	դեղահատեր թաղանթապատ 875մգ+125մգ «վախենում է խոնավությունից»		2 14,2857	642 85,71	3 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3 00	2020 թ. երկրորդ կիսամյակ
5	33611240	Ակտիվացված ածուխ 250 մգ դ/հատ	Ակտիվացված ածուխ Ֆարմստանդարտ Լեկսրեդ ստվա ԲԲԸ	Դեղահատ 250մգ «վախենում է խոնավությունից»	հատ	2, 1	420	2 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	2 00	2020 թ. երկրորդ կիսամյակ
6	33671114	Ամինոֆիլին 150 մգ	Էուֆիլին “Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան” ԲԲԸ	Դեղահատ 150մգ, <<վախենում է խոնավությունից >>	հատ	2, 93333333 3	176 0	6 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	6 00	2020 թ. երկրորդ կիսամյակ
11	33661121	Ացետիլսալիցիլաթթու 150 մգ	Կարդիոմագնիլ Տակեդա ԳՄԲՀ	Դեղահատ աղելույծ 150մգ <<վախենում է խոնավությունից >>	հատ	3 1,26	250 080	8 000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	8 000	2020 թ. երկրորդ կիսամյակ
13	3369112 1	Ալբենդազոլ 400 մգ դ/հ	Ալբենդազոլ Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-	Դեղահատ 400մգ <<վախենում է խոնավությունից >>	հատ	1 73,25	346 5	2 0	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	2 0	2020 թ. երկրորդ կիսամյակ

			րդ միկրոշրջան, տուն 19								
15	33631180	Արծաթի սուլֆադիազին նրբաքսուք 1% 50գ	Դերմազին Սալուտաս Ֆարմա ԳմբՀ	Ալյումինե պարկուճ 1% 50գ <<վախենում է ջերմությունից>>	հատ	1930	5790	3	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3	2020 թ. երկրորդ կիսամյակ
18	33621360	Գլիցերիլ եռնիտրատ (նիտրոգլիցերին)ն 0.5 մգ	Նիտրոգլիցերին-ԱՄ "Տեխնոլոգ" ՀԲԸ	Դեղահատ 0,5մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	8,15	6520	800	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	800	2020 թ. երկրորդ կիսամյակ
19	33661153	Դեքսամեթազոն 0.5մգ	Դեքսամեթազոն ԿՌԿ Ա.դ.	Դեղահաբ 0,5 մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	27,2	8160	300	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	300	2020 թ. երկրորդ կիսամյակ
21	33621380	Դիգոքսին 0.25 մգ	Դիգոքսին Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ	Դեղահաբ 0,25 մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	5,48	4932	900	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	900	2020 թ. երկրորդ կիսամյակ
24	33631310	Դիկլոֆենակ թ/պ 50 մգ	Դիկլոֆենակ Հեմոֆարմ Ա.Դ.,	դեղահատ 50մգ<<վախենում է խոնավությունից>>	հատ	5,9	15900	1000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1000	2020 թ. երկրորդ կիսամյակ
25	33691212	Դիոսմին+հեսպերիդին 450մգ+50մգ թաղանթապատ	Տուրբո միկրոն Ջի Ֆարմասյուտիկալս ԳՄ	Դեղահատեր թաղանթապատ 450մգ+50մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	84,91666667	10190	120	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	120	2020 թ. երկրորդ կիսամյակ

			ՍՊԸ								
26	33611170	Դրոտավերին 40 մգ	Դրոտավերինի հիդրոքլորիդ "Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան" ԲԲԸ	Դեղահաբ 40մգ <<վախենում է խոնավությունից >>	հատ	9,2	18400	2000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	2000	2020 թ. երկրորդ կիսամյակ
27	33621210	Երկաթ պարունակող համակցություն 100մգ	Ֆերում ԼԵԿ Լեկ Ֆարմայուտիկալս դդ	Դեղահատեր ծամելու 100մգ <<վախենում է խոնավությունից >>	հատ	7 6,46666667	13764	180	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	80	2020 թ. երկրորդ կիսամյակ
28	33621210	Երկաթ պարունակող համակցություն 50մգ/մլ	Ֆերում ԼԵԿ Սանդոզ Իլակ Սանայի վե Տիկարետ Ա.Ս.,	Օշարակ 50մգ/5մլ, 100մլ ապակե շշիկ «կոտրվող է»	հատ	1 148	22960	20	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	20	2020 թ. երկրորդ կիսամյակ
29	33621760	Էնալապրիլ համեատ 10մգ	Էնալապրիլ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	Դեղահատ 10մգ <<վախենում է խոնավությունից >>	հատ	5,6	33600	6000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	6000	2020 թ. երկրորդ կիսամյակ
32	33661156	Թիմոլոլ 0,5% 5մլ	Թիմոլոլ Էս.Ի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ., Իլֆով, 075100 Օտոպենի,	Ակնակաթիլ 0,5% 5մլ, պլաստիկե սրվակ <<վախենում է ջերմությունից>>	հատ	4 05	12150	30	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	30	2020 թ. երկրորդ կիսամյակ

			Էրոիլոր փ., Նռ.1Ա								
34	33621600	Ինդ ապամիդ թ/պ դ/հ 1.5 մգ	Ինդ ապամիդ ՄԲ ՍՏԱԴԱԻՆԴ ապամիդ Հեմ ոֆարմ ՍՊԸ,	Դեղահատ 1,5մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	3 5,8	859 20	2 400	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ հեռավորությամբ գտնվող դեղատուն	2 400	2020 թ. երկրորդ կիսամյակ
35	33621767	Իզոսորբիտի մոնոնիտրատ 60մգ	Մոնոսորբ Իքսել 60մգ Երկարատև Ձերբազատմամբ Դեղահատեր Դեքսսել-Ֆարմա ՍՊԸ Իզոսորբիդի	Դեղահատ 60մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	1 49,8214333	449 46,43	3 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ հեռավորությամբ գտնվող դեղատուն	3 00	2020 թ. երկրորդ կիսամյակ
36	33642230	Լևոթիրոքսին 100մկգ	Լ-թիրոքսին 100 Բեռլին-Քեմի Բեռլին-Քեմի Ա.Գ.,	Դեղահատ 100մկգ «վախենում է խոնավությունից»	հատ	1 1,01	660 6	6 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ հեռավորությամբ գտնվող դեղատուն	6 00	2020 թ. երկրորդ կիսամյակ
37	33642230	Լևոթիրոքսին 50 մկգ	Լ-Թիրոքսին 50 Բեռլին-Քեմի Բեռլին-Քեմի Ա.Գ.,	Դեղահատ 50մկգ «վախենում է խոնավությունից»	հատ	1 0,99	439 6	4 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ հեռավորությամբ գտնվող դեղատուն	4 00	2020 թ. երկրորդ կիսամյակ
38	33611200	Լոպերամիդ 2մգ	Լոպերամիդի հիդրոքլորիդ «Բո	Դեղահատ 2մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	7, 6	456 0	6 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ հեռավորությամբ գտնվող դեղատուն	6 00	2020 թ. երկրորդ կիսամյակ

			րիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ,								
39	33671131	Լորատադին 10 մգ	Լորատադին Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19	Դեղահատ 10մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	2 3,2	371 20	1 600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորությանվրա դեղատուն	1 600	2020 թ. երկրորդ կիսամյակ
41	33691231	Կալցիում+խոլեկալցիֆերոլ ծամելու 500մգ+10մկգ	Կոմպլիվիտ Կալցիում D3 Ֆորտե Ֆարմստանդարտ-ՈՒֆԱՎԻՏԱ ԲԲԸ,	Դեղահատ 500մգ+10մկգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	3 6,2	651 60	1 800	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորությանվրա դեղատուն	1 800	2020 թ. երկրորդ կիսամյակ
42	33621510	Կապտոպրիլ 25 մգ	Կապտոպրիլ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	Դեղահատ 25մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	3, 85	154 00	4 000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորությանվրա դեղատուն	4 000	2020 թ. երկրորդ կիսամյակ
44	33631300	Կետոպրոֆեն 50 մգ դ/պատիճ	Կետոնալ 50մգ դեղապատիճներ Լեկ Ֆարմասյուտիկալս	Դեղահատ 50մգ ‹‹վախենում է խոնավությունից››	հատ	3 6,72	330 48	9 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորությանվրա դեղատուն	9 00	2020 թ. երկրորդ կիսամյակ

			դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա								
45	33631300	Կետոպրոֆեն Ներարկման 50մգ/մլ	Կետոնալ Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա	Լուծույթ ներարկման 50մգ/մլ <<կոտրվող է>>	հատ	1 74,4	348 8	2 0	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	2 0	2020 թ. երկրորդ կիսամյակ
47	33642220	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ	Մեթիլպրեդ Օրիոն Քորփորեյշն, Օրիոնինտի 1, 02200 Էսպոո	Դեղահատ 4մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	5 2	624 00	1 200	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1 200	2020 թ. երկրորդ կիսամյակ
48	33621700	Մետոպրոլոլ 25 մգ	Էգիլոկ Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	Դեղահատ 25մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	1 6,9666666 7	305 40	1 800	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1 800	2020 թ. երկրորդ կիսամյակ
49	33611220	Ներքին ընդունման ջրավերականգնիչ աղեր 18.9գ փաթեթ	Ռեհիդրոն Ռեցի Ֆարմ Ղարետս Ա.Լ.Ռ	դեղափոշի դեղաչափված փաթեթիկներ	հատ	2 10	840 0	4 0	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	4 0	2020 թ. երկրորդ կիսամյակ
50	33691133	Ներարկման ջուր 2մլ	Ներարկման ջուր Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա	Լուծույթ ներարկման 2մլ ամպուլներ <<կոտրվող է>>	հատ	1 9,2	576	3 0	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3 0	2020 թ. երկրորդ կիսամյակ

			ԲԲԸ								
51	33611150	Պանկրեատին (լիպազ 3500ԱՄ+ամիլազ 4200ԱՄ+պրոտեազ 250ԱՄ) դ/հ ատեր թաղանթապատ	Մեզիմ ֆորտե Բեռլին-Քեմի ԱԳ	Դեղահատ <<վախենում է խոնավությունից>>	հատ	2 7,55	826 50	3 000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3 000	2020 թ. երկրորդ կիսամյակ
53	33661122	Պարացետամոլ 500մգ	Պարացետամոլ Ֆարմստանդարտ Լեկսրեդ ստվա ԲԲԸ	Դեղահատ 500մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	4, 5	900 0	2 000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	2 000	2020 թ. երկրորդ կիսամյակ
54	33691186	Պիրացետամ 800 մգ	Լուցետամ Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	Դեղահատ 800մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	5 0,6	227 700	4 500	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	4 500	2020 թ. երկրորդ կիսամյակ
56	33621460	Պերինդոպրիլ 5մգ + Ամլոդիպին 5մգ դ/հաբ	Պրեստանս 5մգ/5մգ Սերվիե (Իռլանդիա) Ինդաստրիս ՍՊԸ	Դեղահատ <<վախենում է խոնավությունից>>	հատ	1 43,6333333	430 90	3 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3 00	2020 թ. երկրորդ կիսամյակ
57	33642210	Պրեդնիզոլոն 5մգ դ/հ	Պրեդնիզոլոն Բելմեդ Բելմեդպրեպարատի ՀՈՒՋ	Դեղահատ 5մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	7, 38	369	5 0	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	5 0	2020 թ. երկրորդ կիսամյակ
59	33651131	Սուլֆամեթոքսազոլ +տրիմեթոպրիմ 480 մգ	Բիսեպտոլ Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջոզեֆա Պիլսուդսկի	Դեղահատ 480մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	1 1,95	358 5	3 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3 00	2020 թ. երկրորդ կիսամյակ

			եգո փ., 95-200 Պաբիանից ե՝ Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 6Ա, Պիենկով, Մարիանա Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով, (Լեհաստան)-ի համար								
62	33621730	Վերապամիլ 80մգ	Վերապամիլ Ալկալոիդ Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Դեղահատեր թաղանթապատ 80մգ <<վախենում է խոնավությունից >>	հատ	2 2,86666667	686 0	3 00	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3 00	2020 թ. երկրորդ կիսամյակ
65	33651134	Ցիպրոֆլոքսացին ակնակաթիլ 3մգ/մլ, 5մլ	Ցիպրոֆլոքսացին Էս.Ս ի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ., Իլֆով, 075100 Օտոպենի, Էրոիլոր փ., Նո.1Ա	Ակնակաթիլ 3մգ/մլ, 5մլ պլաստիկե սրվակ <<վախենում է ջերմությունից>>	հատ	3 65	730 0	2 0	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	2 0	2020 թ. երկրորդ կիսամյակ
66	33671116	Քսիլոմետազոլին քթակաթիլ 0,5մգ/մլ	Գալազոլին Պոլֆա 0,05% Վարշավայի դեղագործական գործարան	Քթակաթիլ 0,5մգ/մլ, 10մլ պլաստիկե շշիկ <<վախենում է ջերմությունից>>	հատ	3 00	900 0	3 0	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	3 0	2020 թ. երկրորդ կիսամյակ

			«Պլ ֆա» Ա.Ա,								
67	33611100	Օմ ե պր ազ ո լ 20 մգ	Օմ ե պր ազ ո լ «Բո րիսովյան բուժպատր աստուկներ ի գործարան» ԲԲԸ	Դե ղ ահ ատ 20մգ <<վախե նու մ է խո ն ավ ու թյ ու նից >>	հ ատ	1 1,8666666 7	106 800	9 000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շ առ ավ ղ ով հե ռ ավ որ ու թյ ան վրա դե ղ ատուն	9 000	2020 թ. երկրորդ կիսամյակ
69	3362159 0	Ֆ ու ր ոս մի դ 40 մգ	Ֆ ու ր ոս մի դ Դեղ ագործակա ն Ընկերությու ն "Զդորովյե" ՍՊԸ	Դե ղ ահ ատ 40մգ <<վախե նու մ է խո ն ավ ու թյ ու նից >>	հ ատ	3, 3	660 0	2 000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շ առ ավ ղ ով հե ռ ավ որ ու թյ ան վրա դե ղ ատուն	2 000	2020 թ. երկրորդ կիսամյակ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Համաձայն ՀՀ Կառավարության 2013 թվ.-ի մայիսի 2-ի N 502-Ն որոշման 7-րդ կետի՝ դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը, գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

Բոլոր հղումների դեպքում հասկանալ <<կամ համարժեք >> արտահայտությունը:

. Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման սահմանվում է սպասարկման տարածքում գործող՝ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատների գտնվելու պահանջը, իսկ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատան բացակայության հիմքով գնման ընթացակարգը չկայանալու դեպքում հայտարարվում է նոր գնման ընթացակարգ՝ սահմանելով սպասարկման տարածքում գործող՝ մինչև 15 կմ շառավղով հեռավորության վրա դեղատների գտնվելու պահանջը:

Գնման ընթացակարգի արդյունքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որակավորումը հիմնավորող փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող դեղատան մասին տեղեկատվություն (անվանումը, գտնվելու հասցեն, եթե առաջարկվող դեղատունը չի հանդիսանում հաղթող ճանաչված մասնակցի դեղատան մասնաճյուղ, ապա ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագիր): Տեղեկատվության հիման վրա գնահատվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից

ներկայացված հայտը: ԱԱՊ և հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքված պայմանագրում նշվում է դեղատան վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպք0020ում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.	ք. Երևան, Շիրակի 1/68
ՀՎՀՀ 07300626	ԷՎՈՊՊԲԱՆԿ
Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ Վանաձորի մ/ճ	ՀՀ 16600-05218060100
Հ/հ 2471700009424	ՀՎՀՀ 05507136
Տնօրեն ---------- Մ. Ա. Սիմոնյան	Հեռ. 060 700-500
/ստորագրություն/	էլ. հասցե՝ tender@alfapharm.am
Կ.Տ	----------
	/ստորագրություն/
	Կ.Տ

Հավելված N 2
« 04 » 08 2020 թ. կնքված
<<ՎԳԿՊ ԳՀԱՊՁԲ-20/12>> -1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ի երկրորդ կիսամյակին
1	33651112	Ամոքսիցիլին +քլավուլանաթթու դ/կախույթ 125մգ/5մլ +31,25մգ/5մլ շշիկում	55080
2	33651112	Ամոքսիցիլին+քլավուլանաթթու 250մգ/5մլ + 62,5մգ/5մլ մգ շշիկում	171180
3	33651125	Ազիթրոմիցին 250մգ դեղապատիճ	18600
4	33651112	Ամոքսիցիլին (ամոքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ) դեղահատեր թաղանթապատ 875մգ+125մգ	64285,71
5	33611240	Ակտիվացված ածուխ 250 մգ դ/հատ	420
6	33671114	Ամինոֆիլին 150 մգ	1760
11	33661121	Ացետիլսալիցիլաթթու 150 մգ	250080
13	33691121	Ալբենդազոլ 400 մգ դ/հ	3465
15	33631180	Արծաթի սուլֆադիազին նրբաքսուք 1% 50գ	5790
18	33621360	Գլիցերիլ եռնիտրատ (նիտրոգլիցերին)ն 0.5 մգ	6520
19	33661153	Դեքսամեթազոն 0.5մգ	8160
21	33621380	Դիգոքսին 0.25 մգ	4932
24	33631310	Դիկլոֆենակ թ/պ 50 մգ	15900
25	33691212	Դիոսմին+հեսպերիդին 450մգ+50մգ թաղանթապատ	10190
26	33611170	Դրոտավերին 40 մգ	18400
27	33621210	Երկաթ պարունակող համակցություն 100 մգ	13764
28	33621210	Երկաթ պարունակող համակցություն 50 մգ/մլ	22960
29	33621760	Էնալապրիլի մալեատ 10 մգ	33600
32	33661156	Թիմոլոլ 0,5 % 5մլ	12150
34	33621600	Ինդապամիդ թ/պ դ/հ 1.5 մգ	85920
35	33621767	Իզոսորբիտի մոնոնիտրատ 60մգ	44946,43
36	33642230	Լևոթիրոքսին 100մկգ	6606
37	33642230	Լևոթիրոքսին 50 մկգ	4396
38	33611200	Լոպերամիդ 2մգ	4560
39	33671131	Լորատադին 10 մգ	37120
41	33691231	Կալցիում+խոլեկալցիֆերոլ ծամելու 500մգ+10մկգ	65160
42	33621510	Կապտոպրիլ 25 մգ	15400

44	33631300	Կետոպրոֆեն 50մգ դ/պատիճ	11048
45	33631300	Կետոպրոֆեն ներարկման 50մգ/մլ	14888
47	33642220	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ	62400
48	33621700	Մետոպրոլոլ 25մգ	80640
49	33611220	Ներքին ընդունման ջրավերականգնիչ աղեր 18.9գ փաթեթ	8400
50	33691133	Ներարկման ջուր 2մլ	576
51	33611150	Պանկրեատին (լիպազ 3500ԱՄ+ամիլազ 4200ԱՄ+պրոտեազ 250ԱՄ) դ/հ ատեր թաղանթապատ	82650
53	33661122	Պարացետամոլ 500մգ	9000
54	33691186	Պիրացետամ 800մգ	227700
56	33621460	Պերինդոպրիլ 5մգ + Ամլոդիպին 5մգ դ/հաբ	43090
57	33642210	Պրեդնիզոլոն 5մգ դ/հ	369
59	33651131	Սուլֆամեթոքսազոլ +տրիմեթոպրիմ 480մգ	3585
62	33621730	Վերապամիլ 80մգ	6860
65	33651134	Ցիպրոֆլօքսացին ակնակաթիլ 3մգ/մլ , 5մլ	7300
66	33671116	Քսիլոմետազոլին քթակաթիլ 0,5մգ/մլ	9000
67	33611100	Օմեպրազոլ 20մգ	106800
69	33621590	Ֆուրոսմիդ 40մգ	6600
		Ընդամենը	1622751,1

ԳՆՈՐԴ

<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ
Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.
ՀՎՀՀ 07300626
Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ Վանաձորի մ/ճ
հհ 247170009424
Տնօրեն Սիմոնյան Ս.
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
ք. Երևան, Շիրակի 1/68
ԷՎՈԿԱԲԱՆԿ
հ/հ 16600-05218060100
ՀՎՀՀ 05507136
Հեռ. 060 700 500
էլ. հասցե՝ tender@alfapharm.am
/ստորագրություն/
Կ.Տ